

ՆՈՐԻՑ ՄԵԾՆ ԿՈՄԻՏԱՍԻ ՄԱՍԻՆ

*Անուշավան Եպս. Ժամկոչյան,
Կոմիտաս վարդապետ,
ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2021.- 171 էջ:*

Պարզև Բարսեղյան

Հայ ժողովրդի հանճարեղ զավակների շարքն անհնար է պատկերացնել առանց Կոմիտասի: Նա այն բացառիկ հայերից է, որ ոչ միայն իր ժողովրդի անսպառ սիրուն ու մեծարանքին է արժանացել, այլև ունի համաշխարհային մեծահամբավ հռչակ: Կոմիտասն իր ժողովրդի բազմադարյա հոգևոր-մշակութային ժառանգության խտացումն է, հայի հավաքական անկրկնելի կերպարը: Մեծանուն հայորդու մասին, կարելի է ասել, գրվել է հնարավոր ամեն ինչ, ամբողջությամբ ուսումնասիրվել է նրա թողած հոգևոր-մշակութային ժառանգությունը, բազմաթիվ հեղինակներ են անդրադարձել նրա՝ դրամատիկ և ողբերգական իրադարձություններով լեցուն կյանքին ու գործունեությանը: Կոմիտասի կերպարը եղել և մնում է ոչ միայն բազմաբնույթ ուսումնասիրությունների և վերլուծությունների օբյեկտ, այլև ոգեշնչման ու ընդօրինակման աղբյուր է ժամանակակից բազմահազար սերունդների համար: Նա միաժամանակ Հայաստան աշխարհի մշակութային խորհրդանիշն է, հայ երգարվեստի, ժողովրդական և հոգևոր երաժշտության փրկիչը, համակարգողն ու տեսաբանը:

Եվ ահա ԵՊՀ հրատարակչությունը լույս է ընծայել Անուշավան Եպս. Ժամկոչյանի «Կոմիտաս վարդապետ» մենագրությունը, որը գալիս է լրացնելու հանճարեղ հայի մասին բազմահատոր ուսումնասիրությունների շարքը՝ մեկ անգամ ևս ընթերցողին տանելով կոմիտասյան յուրատեսակ ու անկրկնելի աշխարհ: Անշուշտ, հեղինակին ի սկզբանե դժվարին գործ է բաժին ընկել, որովհետև, թվում է, Կոմիտասի մասին ասված է ամեն ինչ, և ամեն մի նոր աշխատանք ընդամենը հնի կրկնություն պետք է լինի: Սակայն, իրականում, ներկայացված աշխատանքը համառոտ, սակայն բովանդակային առումով հագեցած և նորովի լուծումներով մի ուսումնասիրություն է, որը ներառում է Կոմիտասի ոչ միայն կյանքի և գործունեության կարևորագույն դրվագներն ու հանգրվանները (էջ 15-60),

այլև առանձին-առանձին վերնագրերով ներկայացնում է Կոմիտասին որպես բանահավաք, երաժշտագետ, երգիչ և խմբավար, մանկավարժ, բանաստեղծ ու թարգմանիչ:

Կոմիտասի մասին նախորդ ուսումնասիրություններում երբեմն, ինչպես դիպուկ նկատել է Անուշավան Եպս. Ժամկոչյանը, «... փորձ է արվել ներկայացնելու նրան հայ եկեղեցուց և իր գործունեության բուն հոգևոր ոլորտից անջատ, որով խաթարվում է Կոմիտաս վարդապետի ամբողջական և ճշմարտացի նկարագիրը» (էջ 9): Ինչն էլ, թերևս, հիմնական պատճառն է «... եղած փաստերի հիման վրա, այս ոչ մեծ աշխատության շրջանակում կերտել Կոմիտասի՝ հնարավորինս ամբողջական կերպարը, իբրև մի անձի, որ նաև քրիստոնեական ոգու կրողն էր, հայ եկեղեցու ծնունդը, այն եկեղեցու, որից ակունքվեց հոգևոր երաժշտությունն ու երգարվեստը» (էջ 9): Աղբյուրների հանգամանալից և մանրամասն ուսումնասիրությամբ, ինչպես նաև «Ի մի բերելով նորահայտ բոլոր նյութերը՝ հեղինակն իր առջև խնդիր է դրել «... ցույց տալ և հնարավորինս լրացնել Մ. Աթոռ Սբ. Էջմիածնի հոգեծին զավակի միաբանական և հոգևոր գործունեությունը՝ անդրադառնալով նաև նրա գիտական, հոգևոր երաժշտության ուսումնասիրությանը վերաբերող և հոգևոր միջնադարյան երաժշտության ներդաշնակմանը, կատարմանը և հանրահռչակմանը ուղղված աշխատանքին» (էջ 13):

Այս և այլ խնդիրների լուծման կուռ տրամաբանությամբ էլ աշխատանքի մի ստվար հատվածը նվիրված է Կոմիտասի կենսագրությանը, և չնայած այն վերնագրված է «Կենսագրական ակնարկ», սակայն բավականին հարուստ տվյալներ է պարունակում, և մեծ հայորդու կենսագրության մի քանի դրվագներ առավել լավ են ներկայացված ու լուսաբանված: Մանրամասն ներկայացնելով մանուկ Սողոմոնի մանկության հանրահայտ դրվագներն ու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում հայտնվելը՝ հեղինակը հատկապես կարևորում է այն հանգամանքը, որ Կոմիտասը «... հսկայական, թռիչքածև մասնագիտական զարգացում» է ապրել Մայր Աթոռում, և «Էջմիածին գալով իբրև անգամ հայերենին լավ չտիրապետող մանուկ՝ նա կարճ ժամանակում դառնում է հայ եկեղեցական երաժշտության լավագույն գիտակն ու մասնագետը...»: Եվ իրավամբ, Կոմիտաս երևույթի կայացման և զարգացման գործում անուրանալի է Հայոց եկեղեցու դերակատարությունը. ճակատագրական ընտրության արդյունքում Մայր Աթոռում հայտվելով՝ մանուկ Սողոմոնը ստացավ հնարավորու-

թյուն ուսանելու այն ժամանակվա հայ իրականության լավագույն կրթական հաստատություններից մեկում, ուսումնառություն, որը հնարավորություն ընձեռեց սանը դառնալու այնպիսի մեծահամբավ հայորդիների, ինչպիսիք էին Հովհաննես Հովհաննիսյանը, Քրիստափոր Կարա Մուրզան, Մակար Եկմայանը, Մաղաքիա արք. Օրմանյանը, իսկ դառնալով շրջանավարտ՝ նաև անմիջապես դասախոսական աշխատանքի անցնելու հայրենի կրթօջախում որպես երաժշտության դասատու: Վերջին այս իրադարձության արդյունքում էլ, Անուշավան եպս. Ժամկոչյանի դիպուկ բնորոշմամբ՝ «... ճեմարանի դասախոս Կոմիտասի առջև գործունեության լայն ճանապարհ է բացվում» (էջ 25): Միաժամանակ նոր մակարդակի է բարձրանում «Եկեղեցական երգեցողություն» առարկայի դասավանդումը, որոշակիորեն լուծվում են երաժշտության դասավանդմանն ու դասագրքերին առնչվող լուրջ խնդիրները: Այս շրջանում էլ, դասավանդմանը զուգահեռ, Կոմիտասը ձեռնամուխ է լինում ժողովրդական երգերի հավաքման, մշակման, դասակարգման աշխատանքներին, մեծ հետաքրքրություն տաժում երաժշտության նկատմամբ:

Կոմիտասի կենսագրության հաջորդ կարևոր հանգրվանը, որին անդրադառնում է Անուշավան եպս. Ժամկոչյանը, Գերմանիայում ուսանելու շրջանն է: Բեռլինում Կոմիտասն ուսումնասիրում է մասնագիտական մի շարք առարկաներ և ձեռք բերում հմտություններ, որոնք վերջանակաՆապես ձևավորում են մեծատաղանդ երաժշտին: Հատկապես ուշագրավ են եվրոպացի ուսուցիչների և դասընկերների՝ Կոմիտասին ուղղված նամակները, որոնք նրա հանճարի գնահատականներն են: Եվ պատահական չէ, որ աշխատության հեղինակը ամբողջությամբ մեջբերում է դրանցից երկուսը, որոնք առավել ամբողջական են դարձնում մեծանուն հայի կենսագրության այս շրջանի գնահատումն ու արժևորումը: Միաժամանակ տեղին է հեղինակի կողմից տրվող Կոմիտասի կյանքի առաջին շրջափուլի ամփոփ գնահատականը՝ «Արգասաբեր այդ շրջափուլը պատվանդան է ստեղծել գիտական և ստեղծագործական նորանոր սխրանքների ու թռիչքների համար» (էջ 42):

Ուսումնասիրության հաջորդ հատվածն ընդգրկում է Կոմիտասի հետտազա գործունեությունը Գերմանիայից վերադառնալուց հետո: Այս փուլում վերադառնալով Մայր Աթոռ՝ հանճարեղ հայորդին «... ձեռնամուխ է լինում իր սիրած գործին և զբաղվում է երաժշտական բազմապիսի հարցերով, հասարակական աշխատանքով, կրթում աշակերտներ» (էջ 43):

Միաժամանակ դասախոսական և խմբավարական աշխատանքները զուգորդվում են ժողովրդական երգերի հավաքմամբ ու մշակմամբ: Հեղինակը առանձնահատուկ ուշադրության է արժանացնում նրա ազգանվեր գործունեությունը՝ շրջագայություններ, դասախոսություններ, ելույթներ ու զեկուցումներ տարբեր քաղաքներում և հանրահայտ հարթակներում: Կոմիտասի կյանքի այս շրջափուլի և հատկապես նրա՝ եվրոպական երկրներ շրջագայությունների ամփոփումն ու գնահատականը առավել ամբողջական է դառնում ժամանակի օտարալեզու և տեղական մամուլի անդրադարձով: Հայ եկեղեցական և ժողովրդական երգերը օտարներին հասանելի են դառնում հատկապես այս շրջանում. Ֆրանսիա, Գերմանիա, Շվեյցարիա, դասախոսություններ, համերգներ, զեկուցումներ, «... մի խոսքով՝ հայ երաժշտության քարոզչություն՝ հնարավոր բոլոր միջոցներով» (էջ 46), - ինչպես դիպուկ նկատում է Անուշավան Եպս. Ժամկոչյանը: Հեղինակը նաև ուշադրություն է հրավիրում այն կարևոր հանգամանքին, որ Կոմիտասը, այնուամենայնիվ, միայն երաժշտությամբ չէ, որ զբաղվել է, Նա նաև ամենայն պատասխանատվությամբ կատարել է իրեն տրված յուրաքանչյուր հանձնարարություն, որը բխում էր իր հոգևոր գործունեությունից: Նաև անդրադարձ է կատարվում Կոմիտասի նկատմամբ Մայր Աթոռի հոգևորականության ոչ այնքան բարյացակամ վերաբերմունքին, ինչը, անշուշտ, նոր երևույթ չէ և յուրաքանչյուր հանճարի կյանքի անբաժան ուղեկիցն է: Եվ հեղինակի կարևոր եզրահանգումն է. «Հիրավի, այն պաշտամունքային կերպարը, ինչպիսին Կոմիտասը ներկայանում է մեր օրերում, ստեղծվել է միայն նրա մահից հետո՝ իր նվիրյալների ջանքերով: Կենդանության օրոք Կոմիտասը բոլորովին էլ ըստ արժանվույն գնահատված, մեծարված ու նույնիսկ հասկացված չէր» (էջ 53): Այդ համատեքստում էլ ներկայացվում է Կոմիտասի՝ Մաթեոս Բ Իզմիրյան կաթողիկոսին ուղղված դիմում-նամակների վերլուծությունը, որի եզրահանգումն այն է, որ մեծանուն հայորդին, չնայած իր նկատմամբ ոչ բարյացակամ վերաբերմունքին, մեկ անգամ ևս ապացուցում է իր նվիրվածությունը մայր եկեղեցուն, «... չի տարանջատում եկեղեցին և գիտությունը, այլ, ընհակառակը, իր տաղանդն ու միտքը սիրով ի սպաս է դնում Մայր Եկեղեցուն» (էջ 54):

Շարունակելով Կոմիտաս վարդապետի կյանքի և գործունեության համառոտ ակնարկը՝ Անուշավան Եպս. Ժամկոչյանը ներկայացնում է 1910թ. հետո ընկած ժամանակահատվածը՝ Կոմիտասի հաստատվելը Կ.

Պոլսում, այնտեղ նրան գրկաբաց ընդունելն ու աջակցելը, համերգները տարբեր քաղաքներում ու երկրներում: Եվ անշուշտ ճիշտ է հեղինակի այն եզրահանգումը, որ «... Կոստանդնուպոլսում Կոմիտասը գտնում է որոնաձը՝ ստեղծագործ կյանքով ամբողջովին երաժշտությանը նվիրված ապրելու հնարավորությունը...» (էջ 56): Կոմիտասի կյանքի հենց այս շրջանն է, որ կարելի է ասել ստեղծագործական կյանքի վերելքի գագաթնակետն է և միաժամանակ ցավագին անկումը, քանի որ Կ. Պոլսում հաստատվելը ոչ միայն նրա գործունեության համար լայն հորիզոններ բացեց, այլև դարձավ ճակատագրական, որի արդյունքը Մեծ Եղեռն արհավիրքն էր և հանճարեղ հայի՝ իր ժողովրդի դաժան ճակատագրի կիսումը:

Ներկայացվող աշխատության երկրորդ գլուխը, որը վերնագրված է «Կոմիտաս վարդապետի գեղագիտական հայացքները», իրականում ընդգրկում է ոչ միայն վերնագրում արտացոլված թեման, այլև այլ ենթագլուխների տեսքով ներկայացնում է Կոմիտաս վարդապետի ստեղծագործ կյանքի տարբեր դրվագներ: Այս դեպքում թերևս ավելի նպատակահարմար կլիներ աշխատության երկրորդ գլուխն՝ ունենար այնպիսի վերնագիր, որն իրականում կարտացոլեր այս գլխի ողջ բովանդակային ընդգրկումը: Սակայն, այդուհանդերձ, պետք է փաստենք, որ Անուշավան եպս. Ժամկոչյանին հաջողվել է շատ սեղմ սահմանների մեջ ներկայացնել հայ ժողովրդի հանճարեղ զավակի ստեղծագործական հետաքրքրությունների ողջ ներկայանակը՝ եկեղեցական երաժշտության «հեղաշրջողից» մինչև երաժշտագետ, խմբավար և կոմպոզիտոր, բանահավաքից մինչև մանկավարժ, բանաստեղծ ու թարգմանիչ:

Կոմիտաս վարդապետի «բրոնզաձուլ», «խորհրդանշական-պաշտամունքային» կերպարի ձևավորման պատմությանը անդրադառնալով՝ Անուշավան եպս. Ժակոչյանը ի վերջո հանգում է այն կարևոր եզրահանգմանը, որ «... 20-րդ դ. վերջին, երբ արդեն հրատարակվել էր նրա ժառանգության մեծ մասը, և Արևմուտքում նրա ունեցած հաջողությունների և դժբախտ ճակատագրի կողքին իբրև ծանրակշիռ ժառանգություն սեղանին դրվեց նրա բանահավաքչական, գիտական և ստեղծագործական արդյունքը, երբ բեմերից սկսեցին հնչել վաղուց մոռացված մշակումները, եկեղեցիներում համատարած կիրառվեցին հայկական ոճի երգեցողության նրա սկզբունքները, իսկ գիտության և մանկավարժության տարբեր բնագավառներում սկսեցին նորովի իրառվել նրա՝ երբեմն իր ժամանա-

կից առաջ ընկած հարցադրումները, նոր սերունդը նորովի վերագտավ Կոմիտաս-երաժշտին ու գիտնականին» (էջ 62):

Ընդունելով, որ Կոմիտասի անձի և գործի գնահատման խնդիրը «դժվարին և պատասխանատու» գործ է, հեղինակը հատկապես անդրադառնում է Կոմիտասի ստեղծագործական կյանքին նաև այն տեսանկյունից, որ «... նա եղավ ինչպես եկեղեցական երգեցողության, նույնպես և գեղջուկ երգի, քաղաքային բանահյուսության ամենաստույգ գնահատականների հեղինակը...» (էջ 62), և այսօր էլ նրա մշակումներն ու ստեղծագործությունները հնչում են ամենատարբեր բեմերում, կենդանի պահում հայ հոգևոր և ազգային երաժշտությունը, ուստի «... այսօր Կոմիտասը ոչ միայն պատմական արժեք է կամ խորհրդանիշ, նա կենդանի, գործող երաժշտարվեստի մի կարևոր մասն է» (էջ 62): Եվ անշուշտ, պետք է համաձայնենք հեղինակի այն դիրքորոշմանը, որ Կոմիտասի կատարած ծավալուն աշխատանքը, որը «հիրավի, ... վեր է մեկ անհատի կարողություններից», կարելի է բացատրել միայն այսպես. «Առասպելական աշխատունակությունը, միանալով երաժշտական հանճարին, հնարավորություն է տվել, որ Կոմիտասը հրաշքներ գործի թե՛ ստեղծագործության, թե՛ կատարողական արվեստի, թե՛ գիտահետազոտական աշխատանքների ասպարեզում: Սխրանք, որ իսկապես հավասար է հրաշքի» (էջ 64):

Բավականին հետաքրքրական հեղինակային մոտեցում է Կոմիտասին որպես եկեղեցական երաժշտության հեղաշրջող ներկայացնելը: Աշխատության այս հատվածում հեղինակը մանրամասն նկարագրում է եկեղեցական երաժշտության 19-րդ դարավերջի և 20-րդ դարի սկզբի «աղավաղված և խառնաշփոթ» վիճակը, ներկայացնում այդ վիճակի շտկմանն ուղղված կոմիտասյան մոտեցումները, դիտողություններն ու առաջադրությունները, որոնք հետագայում դարձան եկեղեցական երաժշտությունը նոր մակարդակի բարձրացնելուն ուղղված կոմիտասյան ստեղծագործ կյանքի կարևորագույն և առանցքային մասը: Կոմիտասին «եկեղեցական հերաժշտության հեղաշրջող» դիտարկելիս էլ Անուշավան Եպս. Ժամկոչյանը կատարում է Կոմիտաս վարդապետի հողվածների հետաքրքիր և արժեքավոր վերլուծություն՝ հիմնավորելով Կոմիտասին այդպիսին համարելու իր մոտեցումները: Մոտեցումներ, որոնք լիովին հասկանալի են դարձնում Կոմիտասի այն մեկնաբանությունը, որ ժողովրդական և եկեղեցական երգերի կապը գտնելու համար իր համար հիմք են ծառայել ժողովրդական երգերը: Միաժամանակ Կոմիտասի առանձնա-

կի հետաքրքրությանն է արժանացել «Հայաստանյայց Եկեղեցու Ս. Պատարագը», որի նկատմամբ կոմիտասյան մոտեցումները ամփոփ ներկայացվում են մտահոգությունների և ստեղծագործական ձեռնարկումների տեսքով, որի վերջնակետը «Ս. Պատարագի սեփական բազմաձայն դաշնավորումն էր» և համոզմունքը, որ «երաժշտաժիսական այդ ստեղծագործությունն ըստ կարելվույն պետք է ազատել օտար ազդեցություններից»: Կոմիտասյան Պատարագի լավագույն վերլուծական գնահատականներից կարելի է համարել հեղինակի այն միքտը, որ Կոմիտասը «... կորստից ու մոռացումից փրկելով հայ հոգևոր երգի մի շարք ուրույն և ինքնատիպ տարբերակներ, դրանք քառաձայնելով ու իր երգեցիկ խմբով կատարելով, միջազգային հանրությանը և, իհարկե, սեփական ժողովրդին հասու դարձնելով, կատարել է Լուսավորչաշեն Հայ Եկեղեցու երգը փրկողի, պահպանողի ու տարածողի դերը» (էջ 81):

Ներկայացվող աշխատության հաջորդ բավականին ինքնատիպ և կարևոր հատվածը Կոմիտասի բանահավաքչական գործունեությանն անդրադառնալն է, գործունեություն, որի արդյունքը դարձան հայ ժողովրդական երգի փրկված նմուշները: Իրապես անհնար է չգնահատել հանջարեղ հայրորդու կատարած աշխատանքն այս ոլորտում, և ինչպես դիպուկ նկատել է հեղինակը, բանահավաքչությամբ զբաղվող մեծանուն շատ գործիչների շարքում «Կոմիտասը դարձավ այդ ժառանգության հավաքագրման առաջամարտիկը»: Այս ելակետն էլ հնարավորություն է տվել Անուշավան Եպս. Ժամկոչյանին ներկայացնելու Կոմիտաս-բանահավաքի ստեղծագործական կյանքի մանրամասն և ամբողջական վերլուծությունը:

Նույն տրամաբանությամբ էլ հեղինակը դիտարկում է Կոմիտաս վարդապետին որպես երաժշտագետ, երգիչ և խմբավար, կոմպոզիտոր, մանկավարժ և այլն: Եվ յուրաքանչյուր դեպքում, փաստերի և հարուստ տեղեկությունների համադրությամբ տալիս հանճարեղ հայրորդու տվյալ կերպարի ամբողջական և լիակատար վերլուծությունը: Կոմիտասյան ստեղծագործ մտքի հոգևոր և գիտական ժառանգությունը քննարկվում է նեղ մասնագիտական տեսանկյունից, ուսումնասիրության առարկա են դառնում Կոմիտասի մոտեցումները «հայկական եկեղեցական և գեղջկական երաժշտության գլխավոր չորս հիմունք-կանոնների», «հայկական երաժշտական լեզվի առանձնահատկությունների», ժանրային դասակարգման, «ժողովրդական երգի ձևի» և ռիթմի մասին:

Այնուհետև, առանձին ենթագլուխներով հատուկ անդրադարձ է կատարվում Կոմիտաս վարդապետին որպես երգիչ, խմբավար և կոմպոզիտոր, գնահատվում մեծ հայորդու հանճարը «երգեցողության, երգի կատարման արվեստի մեջ»: Կարևորվում է նաև Կոմիտասի սեփական գործերի՝ դաշնամուրային պարերի, «Առ գետս բաբելացոց» կանտատի, մեկ տասնյակի չափ երգերի, «Վարդան», «Անուշ» անավարտ օպերաների ուսումնասիրությունը: Քննարկման առարկա են դառնում և՛ կոմիտասյան ստեղծագործությունները, և՛ Կոմիտասի տարատեսակ ուսումնասիրությունները այս ոլորտում, որոնց հանրագումարային արդյունքը հեղինակի այն դիտարկումն է, որ «հանճարեղ վարդապետը գտել էր նոր ժամանակների երաժշտական արվեստի ճշմարիտ նորոգման ամենանպատակահարմար ուղիներից մեկը» (էջ 120):

Եվս մեկ ուշագրավ հատված է Կոմիտասի կերպարի դիտարկումը որպես մանկավարժ: Այս դեպքում հեղինակը քննության առարկա է դարձրել Կոմիտասի «Պարը և մուկը» հոդվածը, որում հանգամանորեն ներկայացված են մեծանուն հայորդու մանկավարժական հայացքները: Մանրամասնությամբ ներկայացվում են նաև Կոմիտասի կազմած առարկայական ծրագրերը, որոնք ամբողջական պատկերացում են տալիս նրա դասավանդման հայեցակարգի մասին:

Աշխատության վերջում Անուշավան եպս. Ժամկոչյանը անդրադառնում է նաև Կոմիտասին իբրև բանաստեղծ և թարգմանիչ, ի հայտ բերելով նաև հանճարեղ հայի ստեղծագործական կյանքի այս, ոչ այնքան հայտնի ոլորտը: Հատկապես ուշագրավ են բանաստեղծությունները, որոնք «... թեպետ ... մեծապես սովերված են նրա երաժշտական ժառանգության կողմից, դրանց մեջ կան հիրավի ոգեղեն, խոր, ինքնատիպ էջեր...» (էջ 129): Միաժամանակ հեղինակը ուշադրության է արժանացրել Կոմիտասի թարգմանությունները, որոնք Վարդապետի ժառանգության քիչ լուսաբանված նմուշներից են: Բավականին ուշագրավ է նաև աշխատության վերջում զետեղված հավելվածը, որի սկզբում Կոմիտասի կենսագրության համառոտ տարեգրությունն է, իսկ այնուհետև հրատարակության են ներկայացվել ուշագրավ վավերագրեր և փաստաթղթեր, որոնք առավել ամբողջական են դարձնում Կոմիտաս հանճարի կյանքի որոշ դրվագների նկարագրությունը:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ Կոմիտաս վարդապետի վերաբերյալ հերթական նոր աշխատությունը և՛ նրա հոգևոր-ստեղծագործական

ժառանգության ևս մեկ կարևոր անդրադարձն է, և՛ որոշակի դրվագներում նորոյթ պարունակող հետազոտություն, և՛, միաժամանակ, ևս մեկ հնարավորություն նորից անդրադառնալու հայ ժողովրդի մեծագույն հանճարի կյանքին, գործունեությանը և թողած անգին ժառանգությանը: